ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կ. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լրացավ Մայիսյան ապստամբության 40 տարին։ Այդ ապստամբությունը Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի համար Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական դրվագներից մեկն է։ Դա մի մասսայական, համաժողովրդական զինված ելույթ էր շահագործողների ու նրանց տիրապետության դեմ, որ կատարվեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի դրոշով, հանդիսանալով նրա հաղթանակի համար Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում մղվող պայքարի կարևոր օղակներից մեկը։

1920 թվականի մայիսին Հայաստանի ապստամբ աշխատավորները իրենց նպատակ էին դրել ազատել դաշնակների մարիոնետային հակաժողովրդական կառավարությունը և երկրում հաստատել սովետական կարգեր։ Դա միակ հնարավոր ելքն էր սովահար ժողովրդին ֆիզիկական ոչնչացումից փրկելու երկիրը վերջնական փլուզումից ազատելու համար։

* * *

Հայաստանը դաշնակների տիրապետության ժամանակաշրջանում ապրում էր տնտեսական ու քաղաքական կրախ։ Վիճակագրական տվյալների համաձայն, Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը 1919 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, ընկել էր 29 անգամ։ Երկաթուղիների շարժական դույքը թալանել էին թուրքական զավթիչները, աշխատում էր ընդհատումներով։ Չէին գործում Ալավերդու և Ղափանի պղնձահանքերն ու գործարանները։ Կանգ էր առել առանց այդ էլ արտադրական նվազ կարողություն ունեցող ձեռնարկությունների մեծ մասը։

Կատարյալ անկում էր ապրում գյուղատնտեսությունը։ Խիստ պակասել էր ընդհանուր ցանքատարածությունը։ Ընկել էր գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, զգալի չափով պակասել էր անասունների գլխաքանակը։ Հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը 1919 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, պակասել էր մոտ 4 անգամ։ Հայաստանի ներկա տերիտորիայում 1914 թվականին ստացված 233,527 փութ զտած բամբակի բերքի դիմաց 1919 թվականին ստացվել էր 7942 փութ, կամ՝ մոտ 30 անգամ պակաս, իսկ այդիներից ստացված բերքը 1919 թվականին չէր անցնում նախապատերազմյան բերքի մակարդակի 10—15 տոկոսից։

Հայաստանի գյուղատնտեսության անկմանը զուգորդում էր հողազրկության անխնայաբար ընթացող պրոցեսը։ Հողը կենտրոնանում էր գյուղի կուլակային և վաշխառուական տարրերի ձեռքում։

Հայաստանը փաստորեն մեկուսացվել էր արտաքին աշխարհից, մասնավորապես Անդրկովկասյան ու Հյուսիսային Կովկասի արդյունաբերական շրջաններից։ Արդյունաբերության քայքայման հետևանքով հսկայական չափերի էր հասել գործազրկությունը։ Երկրի տնտեսական քայքայումը խիստ կերպով անդրադառնում էր բանվորների և ծառայողների նյութական պայմանների վրա։ Կենսամթերքների մեծ պակասը, շուկայական չափազանց բարձր գները, դաշնակների կառավարության «վողի» (չեկերի) արագ արժեզրկումը՝ մի կողմից, բանվորների և ծառայողների աշխատավարձը ժամանակին չվճարելը, պետական մատակարարման խղճուկ չափն ու վիճակը՝ մյուս կողմից, աշխատավորներին զրկում էին ապրուստի նվազագույն հնարավորությունից։ Բանվորների շահագործումը անհանդուրժելի չափերի էր հասնում, աշխատանքային օրվա տևողությունը կազմում էր 12—16 ժամ, իսկ աշխատանքի պայմաններն անտանելի էին։ «Բանվորները սովից ուշաթափվում և շատ անգամ բահը կամ մուրճը ձեռքերին վայր են ընկնում... Բանվորության աշխատունակությունը բոլորովին ընկել է». կարդում ենք երկաթուղային բանվորների դրության մասին մի պաշտոնական զեկուցագրում[1]։ Բանվորները արդարացի պահանջները բավարարելու փոխարեն շատ հաճախ նրանց արձակում էին աշխատանքից, մատնելով սովի։ Իրականում բանվորների և ծառայողների շահերի պաշտպանություն գոյություն չուներ։ Նրանց իրավունքների և շահերի անտեսումը օրինականացված փաստ էր։

Հայաստանում թագավորում էին բռնությունը, անարխիան, կամայականությունը։ Քաղաքացու գույքի և կյանքի ապահովություն գոյություն չուներ։ Պաշտոնյաների, խմբապետների, մաուզերիստների և այդ կարգի պորտաբույծների ապօրինի գործողությունները, կողոպուտը, շարաշահումները չէին պատժվում։ Երկրի բոլոր ծայրերից տագնապալի տեղեկություններ էին ստացվում, որոնք մնում էին «ձայն բարբառո հանապատի»։

Դժնդակ ու ծանր էր դաշնակցական բանակի զինվորների դրությունը, որտեղ իշխում էր ցարական բանակի ռեժիմը։ Իրավազուրկ, նախկին ցարական բանակի սպայության քմահաճույքներին, ծեծին, մարդկային արժանապատվությունը ստորացնող արարքներին ու կամայականություններին ենթակա, հայ աշխատավոր ժողովրդի զինվորական զգեստ հագած զավակները անսահման ցասումով էին լցված դեպի դաշնակների կառավարությունը։ Կանոնավոր բանակի շարքային կազմը, որոշ չափով նաև հրամանատարությունը, ատելությամբ էին համակված դեպի դոյություն ունեցող կարգերը։

Բազմաչարչար հայ ժողովրդին վիճակված ծանր փորձությունների ժամանակաշրջանում, մանավանդ 1918—1920 թվականներին, հայ շահագործող դասակարգերի շահերը արտահայտող քաղաքական պարտիաները, առաջին հերթին դաշնակցականները, իրենց հույսերը կապում էին Անտանտայի իմպերիալիստների հետ, նրանցից էին աղերսում աջակցություն իրենց տիրապետությունը պահպանելու համար։ Արևմուտքի իմպերիալիստները, ինչպես մինչ այդ, այնպես էլ 1918—20 թթ. ժամանակաշրջանում, կեղծ խոստումներով խաբում էին հայ ժողովրդին, որպեսզի նրան օգտագործեն իրենց դաղութակալական նպատակների համար։ Ո՛չ անգլո-ֆրանսիական նվաճողների զիվանագիտա-

[1] «Առաջին մասնայական հեղափոխական շարժումները Հայաստանում», Փաստաթղթերի ժողովածու, Երևան, Հայպետհրատ, 1932, էջ 75։

կան խաղերը, ո՛չ ամերիկյան կեղեքիչների ողորմության փշրանքները հայ ժողովրդին չտվեցին և չէին կարող տալ ո՛չ ազատագրություն և ո՛չ էլ ֆիզիկական գոյության ապահովում։ Օտարերկրյա իմպերիալիստները շահագրգռված էին օգտագործել հայ ժողովրդին որպես թնդանոթի միս, իսկ Հայաստանի տերիտորիան՝ որպես բազա, կամուրջ Մերձավոր Արևելքի իրենց գաղութներն ու կիսագաղութները հնազանդության մեջ պահելու, այդ ժողովուրդների ազատագրական պայքարը խեղդելու համար։ Նրանք ձգտում էին իրենց ձեռքում պահել Հայաստանը՝ Անդրկովկասի հետ Սովետական Ռուսաստանի դեմ պլացդարմ դարձնելու համար։

Գաղութարարներն ու նրանց կամակատար դաշնակցականները, սակայն, չէին կարող աշխատավորներին պահել հնազանդության մեջ։ Երկրում ստեղծված օբյեկտիվ ղրությունը աշխատավորներին պայքարի էր հանում ընդդեմ գոյություն ունեցող կարգերի, հանուն Սովետների իշխանության։

Բանվորները, աշխատավոր գյուղացիները և զինվորները մերթ տարերային, մերթ կազմակերպված պայքար էին մղում տիրող կարգերի և այդ կարգերը պաշտպանող հակառևոլյուցիոն պարտիաների դեմ։ Աշխատավորների ռևոլյուցիոն ելույթները հետզհետե ստանում էին մասսայական և կազմակերպված բնույթ։ Մինչև Մայիսյան ապստամբությունը տեղի են ունենում մի շարք բանվորական գործադուլներ և հուզումներ Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում և ուրիշ վայրերում, գյուղացիական ելույթներ՝ Նոր Բայազետում, Լոռում, Շամշադինում, Էջմիածնի և Զանգեզուրի գավառներում, զինվորական հուզումներ ու ապստամբական ելույթներ՝ Սարիղամիշում, Դիլիջանում, Գորիսում և այլ վայրերում։

1919 թ. ապրիլի 19-ին արևմտահայ աշխատավորները աճող թանկության դեմ բողոքի մեծ ցույց կազմակերպեցին Երևանում։ Ցույցը գնդակոծվեց դաշնակների կողմից։ Այդ առթիվ արևմտահայերի գործադիր կոմիտեն գրավոր բողոք ներկայացրեց կառավարությանը, պահանջելով խիստ պատժել խաղաղ ցույցի գնդակոծումը կազմակերպողներին[1]։ Նույն թվականի սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ նոր մասսայական հակակառավարական ցույց, որի կազմակերպման մեջ այս անգամ գլխավոր դերը կատարեցին Սուրմալուից գաղթած աշխատավորները։ Ցույցարարներին ցրելու նպատակով կառավարությունը անզեն ժողովրդի դեմ դուրս բերեց զինված հեծյալ ջոկատ[2]։

Այդպիսի մասսայական ցույցեր տեղի ունեցան նաև Կարսում, Ալեքսանդրոպոլում և այլ վայրերում։ Առանձնապես սուր բնույթ ստացավ Ալեքսանդրոպոլի երկաթուղային հանգույցի բանվորների 1920 թվականի հունվարի ելույթը, որը վերածվեց գործադուլի։ Այդ գործադուլի կապակցությամբ ձերբակալվեցին գործադուլը կազմակերպող մի շարք կոմունիստ և անպարտիական բանվորներ։ Մասսայական բնույթ ստացավ փոստ-հեռագրական աշխատողների գործադուլային շարժումը, որը ծայր առավ 1919 թվականի հոկտեմբերից։ Գործադուլավորները կառավարությանը ներկայացրին գրավոր պահանջներ։ Նրանց համառ պայքարի շնորհիվ դաշնակների կառավարությունը ստիպված էր մասնակի զիջումներ անել։ Տևական բնույթ ունեցավ Ալեքսանդրոպոլի տպագրական բանվորների գործադուլը։ Գործադուլային շարժմանը

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 199, գ. 11, թ. 163։
[2] Նույն տեղում։

ունեցած մասնակցության համար շատ բանվորներ ու ծառայողներ հեռացվեցին աշխատանքից։

Գյուղացիական մասսայական ելույթներից արժե հիշել հատկապես 1918 թվականի հոկտեմբերի 20-ի գիշերը կառավարական ոստիկանության և Նոր Բայազետի գավառի Կշլաղ ու Ղուլալի գյուղերի գյուղացիների միջև տեղի ունեցած միջադեպը, որն ունեցավ ծանր հետևանքներ։ Կառավարության դեմ զինված մասսայական ելույթ ունեցան Շամշադինի շրջանի գյուղացիները, այն ճնշելու նպատակով կառավարությունը ստիպված էր ուղարկել կանոնավոր զորամաս և հրանոթներ։ Նույնպիսի դաժան միջոցներով էին ձգտում ճնշել գյուղացիական ելույթները Դարալագյազի գավառում, Աշտարակի, Ախտալի և այլ շրջաններում։ Գյուղացիներն սպառնում էին, որ եթե կառավարությունը ինքը չլուծի հողային հարցը, ապա իրենք կլուծեն այն ռևոլյուցիոն ճանապարհով։

1919—1920 թվականներին մի շարք հակակառավարական ելույթներ են տեղի ունենում զորանոցներում։ Սարիղամիշի կայազորի զինվորների գերակշռող մեծամասնությունը գնում էր կոմունիստների հետևից։ 1920 թվականի մարտ-ապրիլ ամիսներին նրանք երկու անգամ զինված միջամտում են իրենց կոմունիստ ընկերներին կալանքից ազատելու գործին։

Գորիսում տեղավորված ստորաբաժանման զինվորները հրաժարվում են մասնակցել Ղարաբաղում ղաշնակ-մուսավաթական խմբապետների կազմակերպված եղբայրասպան պատերազմական գործողություններին։ Բասարգեչարի կայազորի 300-ից ավելի զինվորներ, չենթարկվելով հրամանատարության կարգադրությանը՝ մեկնելու Ղարաբաղ փաստորեն Կարմիր Բանակի դեմ պայքարելու նպատակով, զինված հեռանում են զորանոցներից և, ինչպես կտեսնենք, ակտիվորեն մասնակցում են Ղարանլուղում պատրաստվող ապստամբությանը։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները 1919—1920 թվականներին աճում են քանակով, ամրանում կազմակերպչորեն և դաղափարապես։ Նրանց քաղաքական-մասսայական աշխատանքը աշխատավորների մեջ նոր թափ է ստանում հատկապես 1919 թվականի կեսերից։ ՌԿ(բ)Պ Կովկասյան երկրային Կոմիտեի հանձնարարությամբ, ռևոլյուցիոն մշտական աշխատանք կատարելու համար Հայաստան են գալիս մեծ թվով փորձված բոլշևիկ գործիչներ, սպարտիական պրոպագանդիստներ և ռևոլյուցիոն պայքարում կոփված զգալի թվով բանվոր կոմունիստներ։ Ղեկավար աշխատանքի եկած բոլշևիկ գործիչների թվում էին Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Հ. Պողոսյանը, Ս. Ալավերդյանը, Հ. Սարուխանյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Շ. Ամիրխանյանը, Ե. Սևյանը, Ա. Նուրիջանյանը և շատ ուրիշներ, որոնք տեղական ակտիվի հետ միասին սիստեմատիկ աշխատանք են ծավալում։ Կոմունիստական շարժումը Հայաստանում իրավամբ դարձել էր լուրջ ուժ, որը չէին կարող հաշվի չառնել ոչ միայն ներքին հակառևոլյուցիոն պարտիաները, այլև օտարերկրյա ինտերվենտները։ Դրանով է բացատրվում այն, որ «անկախ» Հայաստանի տերերը պահանջում էին խիստ միջոցներ գործադրել կոմունիստական կազմակերպությունների դեմ, անխնա պատժել նրանց ղեկավարներին։

Կոմունիստների աշխատանքին մեծապես օգնում էին 1919 թվականին Անդրկովկասի արդյունաբերական վայրերից՝ հատկապես Բաքվից, Բաթումից և Թիֆլիսից իրենց հայրենի գյուղերը վերադարձած բանվորները։ Զորացրվում և գյուղ էին վերադառնում նաև տասնյակ հազարավոր զինվորներ, որոնք Ռուսաստանում ականատես էին եղել 1917 թվականի ինչպես բուրժուա-դեմոկրա-

տական, այնպես էլ սոցիալիստական ռևոլյուցիաներին։ Նրանցից շատերը ակտիվ մասնակցել էին Սովետական իշխանության համար մղվող պայքարին և գյուղ էին բերել ռևոլյուցիոն պայքարի շունչը։

Ահա այդ բանվորներն ու զինվորները, ռևոլյուցիոն տրամադրություններ ունեցող տեղական աշխատավորների հետ միասին, հանդիսանում էին կոմունիստական կազմակերպությունների ակտիվ օգնականները։ Դրանցից շատերն էլ համալրում էին կոմունիստական կազմակերպությունների շարքերը։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, 1920 թ. հունվարին գումարված իրենց առաջին կոնֆերանսում ընդունած որոշումներում խորը վերլուծության ենթարկելով երկրի ներքին ու արտաքին դրությունը, գտան, որ միայն բռնի ապստամբության միջոցով կարելի կլինի տապալել դաշնակների տիրապետությունը։ «Միայն այդ ճանապարհով,— ասված է կոնֆերանսի որոշման մեջ,— մենք կկարողանանք Սովետական իշխանության ամուր հիմք դնել, միայն այդ ճանապարհով հնարավոր է փրկել մասսաներին կործանումից...»[1]։ Այսպիսով, ապստամբության միջոցով դաշնակների արդահատելի տիրապետության տապալման նախապատրաստությունն ու իրականացումը դրվում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առջև՝ որպես առաջնահերթ խնդիր։

* *

1920 թ. ապրիլի 28-ին Բաքվի բանվորները և Ադրբեջանի աշխատավորները ապստամբեցին և Կարմիր Բանակի օգնությամբ Ադրբեջանում հաստատեցին սովետական կարգեր։ Սովետական իշխանության հաղթանակը Ադրբեջանում և Կարմիր Բանակի մուտքը Անդրկովկաս իրենց անմիջական ու ջերմ արձագանքները գտան Հայաստանի աշխատավորների լայն խավերի մեջ, ոգեշնչեցին երկրի բանվորներին ու գյուղացիներին՝ դաշնակների հակաժողովրդական տիրապետությունը տապալելու պայքարում, պայքար, որն իր նոր դրսևորումը գտավ 1920 թ. մայիսի 1-ին տոնական ցույցերի ժամանակ և դրանցից հետո։

Մայիսմեկյան ցույցերը Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում և մյուս վայրերում անցան բացառապես կոմունիստական կազմակերպությունների գլխավորությամբ. օրվա լոզունգներն էին՝ «Կեցցե՞ Սովետական իշխանությունը», «Կեցցե՞ Կոմունիստական պարտիան», «Բաքուն ընկավ, հերթը Երևանինն է», «Կորչի՛ դաշնակցությունը» և այլն։ Ցույցերին միանում են բնակչության հսկայական զանգվածներ։ Երևանում դաշնակցականները մասսաներին իրենց հետևից տանելու համար կազմակերպում են իրենց շքերթը, որը սակայն ձախողվում է։ Բանվորները և բնակչության մեծ խմբեր հավաքվում են կոմունիստների կազմակերպած միտինգին, որը տեղի է ունենում այժմյան Ազիզբեկովի հրապարակում։ Այստեղ նրանք բուռն ոգևորությամբ լսում են բանվոր հռետորներին, ելույթ ունեցող զինվորներին։ Այնուհետև ցուցարարները շարժվում են դեպի պառլամենտի շենքը։

Երևանում ցույցերին մասնակցում էին գլխավորապես երկաթուղու, տպարանների, գարաժի, հացի փռերի և մյուս ձեռնարկությունների բանվորներն ու

[1] „Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении", Сборник документов и материалов, Ереван, 1957, էջ 307—310։

ծառայողները։ Ալեքսանդրոպոլում ցույցի ավանգարդումն էին դեպոյի բանվորները, որոնց միացան նաև երկաթգծի սպասարկության և տպարանների բանվորները։ Ղարաքիլիսայում, Կարսում, Սարիղամիշում և մյուս վայրերում նույնպես բանվորները հանդիսանում էին ցույցերի հիմնական մասնակիցները։ Զինվորները ամենուրեք համակրանքով էին վերաբերվում ցուցարարներին, շատ տեղերում միանալով նրանց, եղբայրանալով ժողովրդի հետ և հանդես գալով միասնաբար։ Ցույցերի ժամանակ դաշնակների պարտությունը կատարյալ էր։ Շատ տեղերում նրանք նույնիսկ չհամարձակվեցին փողոց դուրս գալ կամ միտինգներում ելույթ ունենալ, իսկ այնտեղ, ուր նրանք այդ փորձն արեցին, հանդիպեցին ցուցարարների բուռն ատելությանն ու հակահարվածին։

Ալեքսանդրոպոլի, Ղարաքիլիսայի, Երևանի և մյուս վայրերի ցուցարարները բոցավառ ողջույններ հղեցին Ադրբեջանի Ռևկոմին և ազատագրված աշխատավորներին։ Հայաստանի բանվորները, աշխատավոր գյուղացիները և ռևոլյուցիոն զինվորները հայտարարեցին, որ իրենք եղբայրական ձեռք են մեկնում Ադրբեջանի աշխատավորներին, որ կհետևեն նրանց օրինակին և կտապալեն հալածանքի ու բռնության վրա հիմնված դաշնակցական կառավարությունը և Հայաստանում կհաստատեն Սովետական իշխանություն։

Մայիսմեկյան մարտական ցույցերն ու միտինգները ցույց տվեցին, որ Սովետական իշխանության դաղափարը լայն ժողովրդականություն էր վայելում Հայաստանի աշխատավորների մեջ, որ Կոմունիստական պարտիան խոր արմատներ էր գցել լայն մասսաների մեջ։ Դրանք հաստատեցին, որ Կոմունիստական լոզունգներն արտահայտում են մասսաների քաղաքական նպատակները, որ աշխատավորները խոր ատելությամբ էին համակված դեպի դաշնակների տիրապետությունը։

Մայիսմեկյան ցույցերը, որոնք կատարյալ շփոթություն առաջացրին հակառակորդի լագերում, հանդիսացան մասսայական զինված ապստամբության սկիզբը, նրա նախերգանքը։ Հայաստանում ստեղծվել էր անմիջական ռևոլյուցիոն իրադրություն։ Ապստամբական տրամադրությունը համակել էր ժողովրդական մասսաներին։

Մայիսմեկյան ցույցերից անմիջապես հետո խիստ լարված դրություն էր ստեղծվել Ալեքսանդրոպոլում։ Դաշնակները մտադրվել էին կանխել զարգացող ապստամբությունը։ Այդ նպատակով նրանք որոշում են մայիսի լույս 2-ի դիշերը մասսայական ձերբակալությունների միջոցով գլխատել ռևոլյուցիոն շարժումը։ Սակայն իրականացնել իրենց պլանները նրանք չկարողացան։ Տեղեկանալով իշխանությունների այդ մտադրությունների մասին, բոլոր աչքի ընկնող կոմունիստները հավաքվեցին երկաթուղային կայարանում, «Վարդան զորավար» զրահագնացքը, որի անձնակազմը իր հրամանատար Ս. Մուսայելյանի գլխավորությամբ արդեն անցել էր ժողովրդի կողմը և մայիսի 1-ից հետո փաստորեն դարձել էր ապստամբության շտաբը։ Այս կենտրոնի շուրջը համախմբվեցին քաղաքի բոլոր ռևոլյուցիոն ուժերը։

Ալեքսանդրոպոլի կոմիտեն, նկատի ունենալով սրվող դրությունը և հաշվի առնելով իր ուժերը, դիմեց ՌԿՊ Հայաստանի Կոմիտեին (Արմենկոմին), ինդրելով ապստամբելու թույլտվություն։ Արմենկոմը մայիսի 1-ի ցույցերի հաջողությունը հաշվի առնելով՝ համոզվել էր, որ ապստամբությունը սկսելու մոմենտը Հայաստանում արագորեն հասունանում է, և շարժումը գլխավորելու նպատակով որոշում է պլանավորել այն։ Մայիսի մեկից հետո «արդեն պարզ

էր,— կարդում ենք ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեին ուղարկված Արմենկոմի մայիսի 31-ի զեկուցագրում,— որ այդ հարցը (իշխանությունը գրավելու խնդիրը—Կ. Հ.), ամենամոտ ապագայի հարցն է հանդիսանում։ Այդ ուղղությամբ տենդային աշխատանք սկսվեց, և այդ իսկ նպատակով կազմակերպությունները ռազմական զրության մեջ էին դրված»[1]։

Վերը հիշատակված զեկուցագրից տեղեկանում ենք, որ Արմենկոմի պլանի համաձայն ապստամբության ահազանգը պետք է տար Ղազախը, որից հետո անմիջապես ապստամբություններ պետք է սկսվեին Հայաստանի մյուս շրջաններում։ Մայիսի 2-ին Արմենկոմը իր ներկայացուցչին՝ Հ. Կոստանյանին Թիֆլիս ուղարկեց, որպեսզի Կովկասյան Երկրային Կոմիտեն շտապ կարգով Հայաստան գործուղեր Ս. Կասյանին և Ա. Մռավյանին։

Մինչդեռ Արմենկոմը եռանդուն նախապատրաստական աշխատանքներ էր ծավալել ապստամբությունը որոշակի պլանով Ղազախից սկսելու համար, Ալեքսանդրոպոլի կոմիտեն պահանջում էր ապստամբությունն սկսել Ալեքսանդրոպոլում։ Մայիսի 2-ից հետո Ալեքսանդրոպոլից հայտնում են, որ այնտեղ ստեղծվել է մի դրություն, երբ կոմունիստների գլխավորությամբ բանվորները և կայազորի զինվորները փաստորեն ապստամբել և երկաթուղային կայարանն ու նրա շրջակայքը իրենց ձեռքն են վերցրել, թեպետ և քաղաքում դեռևս տիրում էին դաշնակները։ «Հետևյալ օրը (մայիսի 2-ին),— գրում է Մուսայելյանը,— կայազորի բոլոր մասերը սկսեցին ինձ պատվիրակներ ուղարկել։ Ես մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղա նրանց կազմակերպելու և մի քանի օրվա ընթացքում հաջողացրի կատարելապես մի Կարմիր Բանակ կազմակերպել»[2]։

Ահա այս բոլորը հաշվի առնելով, Ալեքսանդրոպոլի կոմիտեն համառորեն կրկնում է իր պահանջը նաև մայիսի 5-ին և 6-ին, որը ստիպում է Արմենկոմին մայիսի 6-ին Ալեքսանդրոպոլ ուղարկել իր ներկայացուցիչներին՝ դրությունը տեղում պարզելու համար։ Միևնույն ժամանակ Արմենկոմը նրանց տալիս է լայն լիազորություններ։

Արմենկոմի ներկայացուցիչներ Դ. Տեր-Սիմոնյանը և Ա. Մելքոնյանը մայիսի 7-ին հայտնում են Արմենկոմին, որ իրենք կանգնած են կատարված փաստի առաջ և այդ պատճառով ընդառաջում են Ալեքսանդրոպոլի ընկերներին՝ ապստամբության սանկցիա տալով նրանց։ Նրանք միևնույն ժամանակ խնդրում են Արմենկոմին, որ նա իր հերթին լայն գործնական աշխատանք ծավալի Ալեքսանդրոպոլի ապստամբներին օգնելու համար։

Նույն օրը Ալեքսանդրոպոլում գումարվում է հատուկ խորհրդակցություն, որին, բացի Ալեքսանդրոպոլի կոմիտեի և Արմենկոմի ներկայացուցիչներից, մասնակցում են նաև Կարսի, Սարիղամիշի, Դիլիջանի և Քավթառլուի ներկայացուցիչները։ Խորհրդակցությունը գտնում է, որ ռևոլյուցիայի ուժերը չախչախումից փրկելու և ստեղծված լարված դրությունից դուրս գալու միակ ելքը ապստամբելն է։ Ընտրվում է Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե, որի կազմի մեջ են մտնում Ս. Մուսայելյանը, Ա. Նուրիջանյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Մելքոնյանը, Ա. Գոգունցը, Ա. Տեր-Սահակյանը, Գ. Սարդսյանը, Լ. Ուլիբեկյանը և Պ. Պետրոսյանը։ Դիրեկտիվ է տրվում Կարսի, Սարիղամիշի, Քավ-

[1] «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում։ Հիշողությունների և դոկումենտների ժողովածու», Երևան, 1930, էջ 148։

[2] ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 30, գ. 6, էջ 122-129։

թաղվի ներկայացուցիչներին՝ անմիջապես վերադառնալ տեղերը, նախապատրաստվել ապստամբության և սպասել Ռազմռևկոմի ցուցումներին։

Ղեկավարվելով Հայաստանի Ռևկոմի դիրեկտիվներով, մայիսի 8-ին Կարսի պարտիական ակտիվը կազմում է ռազմռևկոմ՝ Ղ. Ղուկասյանի գլխավորությամբ։ Սարիղամիշի ակտիվը ռևկոմ է ստեղծում մայիսի 10-ին՝ Ա. Ռուղուրյանի գլխավորությամբ, իսկ Քավթառլուում ռևկոմը ստեղծվում է մայիսի 8-ին Ա. Փանյանի գլխավորությամբ։ Ռևկոմ է ստեղծվում նաև Դիլիջանում՝ Շ. Ամիրխանյանի նախագահությամբ։

Արմենկոմը իր հերթին որոշ գործնական աշխատանք է ծավալում ապրստամբությանը ընդհանուր բնույթ տալու ուղղությամբ և Նոր Բայազետ է ուղարկում Հ. Սարուխանյանին՝ այնտեղ ապստամբական գործողությունները ղեկավարելու համար։ Ռևկոմներ են կազմակերպվում նաև Սուրմալուում, Ղարաքիլիսայում, Շամշադինում, Սիսիանում, Խնձորեսկում և այլ վայրերում։ Ալեքսանդրոպոլում մինչև այդ կազմակերպվել էր Կարմիր Գվարդիա՝ բաղկացած 600 բանվորներից ու կոմունիստներից։

Հայաստանը ապրում էր քաղաքական լարված դրություն, փոթորիկների նախօրյակ։ Դաշնակները, ինչպես իրենք են խոստովանել, կատարյալ շփոթության մեջ էին։ Այնուամենայնիվ նրանք փորձ են անում շտկել դրությունը. արձակվում է պառլամենտը, դաշնակների արևելյան բյուրոն իշխանությունը իր ձեռքն է վերցնում։ Արտակարգ լիազորներ են ուղարկվում գավառները, ուր նրանք չտեսնված պրովոկացիաներ են տարածում կոմունիստների հասցեին։ Սկսվում են տեռորն ու հալածանքները, երկրում հայտարարվում է ռազմական դրություն, բանտերն են նետում ամեն մի կասկածելի անձնավորության։ Ջերբակալություններ են կատարում նույնիսկ նախարարները։

Դասակարգային թշնամին առանձնապես մտահոգված էր Ալեքսանդրոպոլում ապստամբությունը կանխելու հարցով։ Մայիսի 8-ին դաշնակների կառավարությունը գնդապետ Ա. Շահմազյանին և Կ. Սասունուն ուղարկում է Ալեքսանդրոպոլ, նպատակ ունենալով ստիպել Մուսայելյանին, որ նա հեռանա ապստամբներից։ Կառավարության այդ պատվիրակները փորձում են կազմալուծել կայազորի զինվորների ռևոլյուցիոն միասնությունը և նրանց օգտագործել ռևկոմի դեմ։ Կտրուկ մերժում ստանալով Մուսայելյանից, Սասունին և Շահմազյանը որոշում են դիմել զինվորներին։ Այդ նպատակով նրանք փորձում են միտինգներ հրավիրել Բերդում և Սեվերսկի զորանոցներում։ Բերդում տեղի ունեցած միտինգում զինվորները հայտարարում են, որ չեն ճանաչում կառավարությանը և ցանկանում են երկրում հաստատել Սովետական իշխանություն։ Ինչպես խոստովանում է գնդապետ Ա. Շահմազյանը, զինվորների ներկայացուցիչները իրենց ելույթներում ասում էին, որ միայն բոլշևիկները կարող են հայ ժողովրդին փրկել կործանումից, միայն Սովետական իշխանությունը կարող է նրան տալ խաղաղություն։ Զինվորները բացականչում էին՝ կեցցե՞ Սովետական իշխանությունը, կորչի՞ դաշնակցությունը[1]։

Քաղաքական խայտառակ պարտություն կրելով Բերդում կայացած միտինգում, դաշնակները հրաժարվում են Սեվերսկի զորանոցներում միտինգ հրավիրելու մտքից, համոզված լինելով, որ նույնպիսի միասնական հակահարված կստանան նաև այնտեղ։ Նույն օրը դաշնակները ապստամբներին, հատկապես

[1] Տե՛ս «Հառաջ», 1920, № 105։

զրահագնացքի անձնակազմին, ահաբեկելու փորձ են կատարում։ Մաուզերիստներն ու հակասովետական մութ տարրերը ծպտված մոտենում են զրահագնացքին՝ անակնկալ հարձակման անցնելու համար, բայց հանդիպում են դիմադրության և դիմում են փախուստի։ Աշխատավորներին ահաբեկելու, նրանց բոլշևիկների ազդեցությունից հեռացնելու ուղղությամբ դաշնակների ձեռնարկած փորձերը հաջողություն չեն ունենում նաև Դիլիջանի, Նոր Բայազետի գավառներում, Սարիղամիշում և մյուս վայրերում։ Կառավարության արտակարգ լիազոր Մանասյանը Դիլիջանից հայտնում է, որ ինքը չի կարող հենվել կանոնավոր և միլիցիոն զորամասերի վրա, ինչպես նաև ոստիկանության վրա։ Նա պահանջում է Դիլիջանից հեռացնել 6-րդ գունդը, փոխարինելով այն մաուզերիստական ջոկատներով։ Նոր Բայազետի դաշնակ լիազորները հայտնում էին, որ իրենք պաշտպանություն չեն գտնում ո՛չ զորքի և ո՛չ էլ ժողովրդի կողմից։

Ապստամբության ազդանշանը, որ տրվեց «Վարդան զորավար» զրահագնացքից, ոտքի հանեց դաշնակների տիրապետության դեմ ատելությամբ լցված աշխատավորական մասսաներին։ Մայիսի 9-ին հեծյալ գնդի ստորաբաժանումների միջոցով զինաթափ արվեց Կազաչի պոստում թաքնված ավելի քան 400 հոգուց բաղկացած մաուզերիստական ջոկատը։ Մայիսի 10-ի առավոտյան Հայաստանի Ռազմռևկոմը հայտարարություն է հրապարակում, որով հայտարարում է, որ դաշնակների իշխանությունը տապալված է և երկրում հաստատվում են սովետական կարգեր։ «...Չքավոր գյուղացիության, բանվորների և կարմիր զորքի կամքով,— ասված է այդ հայտարարության մեջ,— Հայաստանի Կոմունիստական կուսակցության Ռազմա-հեղափոխական կոմիտեն Հայաստանի ռեսպուբլիկայի մեջ հռչակում է Սովետական իշխանություն։ Այսօրվանից մաուզերիզմի, խմբապետների, սպեկուլյանտների վրա հենված և գողության, կողոպուտի, ինքնիշխանության վրա հիմնված դաշնակների կառավարությունը տապալված է»[1]։

ՀՌՌ Կոմիտեն գրավոր պահանջ է ներկայացնում Ալեքսանդրոպոլի քաղաքային վարչությանը՝ քաղաքը առանց դիմադրության հանձնելու մասին և մի կոչով դիմում է քաղաքացիներին, որով նախազգուշացնում է, որ ամեն մի անօրինականություն խիստ կպատժվի իշխանության կողմից[2]։

Մայիսի 10-ին, օրվա երկրորդ կեսին, քաղաք են մտնում առաջին հեծգնդի առաջին վաշտը Ի. Խ. Բաղրամյանի հրամանատարությամբ և բանվորական գվարդիայի ջոկատը։ Թշնամին դիմադրություն ցույց չի տալիս, աշխատավորները մարդիկ խանդավառությամբ են ընդունում Սովետական իշխանության հաղթանակը։

Ալեքսանդրոպոլի ապստամբների օրինակով իշխանությունը իրենց ձեռքն են վերցնում Կարսի, Սարիղամիշի և Քավթառլուի շրջանի բանվորները, զինվորներն ու աշխատավոր գյուղացիները։ Ալեքսանդրոպոլում սկսված ապստամբությունը ոտքի է հանում նաև Հայաստանի մյուս շրջանների աշխատավորներին։ Ապստամբությունը ընդհանուր բնույթ է ստանում։

Մայիսի 9-ին Արմենկոմի հանձնարարությամբ Նոր Բայազետ հասած Հ. Սարուխանյանը տեսակցում է Բ. Բատիկյանի հետ և հետևյալ օրը ուղևոր-

---

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գ. 102, թ. 170։
[2] ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 30, գ. 6, թ. 15—19։
[3] Ներկայումս ՍՍՌՄ մարշալ։

վում է Ղարանլուղ, ուր նախապատրաստում և գլխավորում է ապստամբությունը։ Մայիսի 11-ին Բասարգեչարի կայազորի ավելի քան 300 զինվորներ, չենթարկվելով Ղարաբաղ մեկնելու մասին խմբապետ Համազասպի հրամանին, կոմունիստների և ռևոլյուցիոն զինվորների (Բ. Սինասյան, Ս. Բոստանջյան, Վ. Մելոյան և ուրիշներ) գլխավորությամբ գուրս են գալիս Բասարգեչարից ու շարժվում դեպի Ղարանլուղ։ Այստեղ նրանք միանում են տեղի ապստամբներին, մայիսի 13-ին կազմում են գավառային ռևկոմ։ Ապստամբները Սարուխանյանի գլխավորությամբ մայիսի 15-ին շարժվում են դեպի Նոր Բայազետ և մայիսի 17-ին գրավում այն։ Ընտրվում է Նոր Բայազետի գավառային ռևկոմ՝ Հ. Սարուխանյանի գլխավորությամբ։

Մայիսի 14—15-ին Շամշադինի շրջանի ապստամբ գյուղացիները, Ա. Բերբերյանի, Մ. Զարգարյանի, Հ. Գրիգորյանի ղեկավարությամբ, իշխանությունը ամբողջ շրջանում իրենց ձեռքն են վերցնում, իսկ մայիսի 19-ին Շ. Ամիրխանյանի և Ե. Մկրտումյանի գլխավորությամբ հաղթական ապստամբություն է սկսվում Քարվանսարայի (Իջևանի) շրջանում։ Ապստամբներին միանում են Քարվանսարայում գտնվող 6-րդ գնդի երկու վաշտերը՝ Ս. Հակոբջանյանի գլխավորությամբ։ Մինչ այդ կազմված գավառային ռևկոմի կարգադրությամբ ձերբակալվում են դաշնակցական կառավարության հատուկ լիազոր Մանասյանը և մի շարք պատասխանատու աշխատողներ։ Մայիսի 20-ին ռևկոմի հրավերով Կարմիր Բանակի մի ստորաբաժանում Ղազախից գալիս է Քարվանսարա. տեղի է ունենում ապստամբների, աշխատավոր գյուղացիների և Կարմիր Բանակի զինվորների միացյալ միտինգ։ Հայ ժողովուրդը հսկայական խանդավառությամբ, ջերմ ողջույններով և աղ ու հացով է դիմավորում ազատարար Կարմիր Բանակի մարտիկներին։

Մայիսի 21-ին Քարվանսարայի ապստամբները Ե. Մկրտումյանի գլխավորությամբ շարժվում են դեպի Դիլիջան։ Դաշնակների կառավարության տեղական իշխանությունը փախչում է Սեմյոնովկա։ Ապստամբները գրավում են պետական հիմնարկները, ընտրում են ռևկոմ Մկրտումյանի նախագահությամբ։ Ռևկոմի կազմի մեջ մտնում են Ս. Հակոբջանյանը, Վ. Հովսեփյանը, Մ. Աղայանը, Վ. Ալեքսեևը և ուրիշներ։

Սիսիանի շրջանում ապստամբական դրություն էր դեռևս մայիսի 20-ից, իսկ 24-ին կազմվում է շրջանային ռևկոմ, որը իշխանությունը իր ձեռքն է վերցնում։ Շրջանի ապստամբ գյուղերի աշխատավորները, կոմունիստների գլխավորությամբ, կազմակերպում են ավելի քան 500 հոգուց բաղկացած զինված ջոկատ։ Գորիսի շրջանում ապստամբության դրոշը առաջինը բարձրացնում է Խնձորեսկ գյուղը։ Մայիսի 28-ին գյուղի ռևկոմը վերցնում է իշխանությունը, գրավում գյուղում գտնվող զորամասի շտաբը, զինապահեստը և մեկուսացնում զորամասի հակառևոլյուցիոն հրամանատարներին։

Ապստամբություն էր նախապատրաստվում նաև Սուրմալուի, Ղարաքիլիսայի գավառներում, Կտղզվանում, «Ազատամարտ» զրահագնացքում, 2-րդ գնդում և այլ վայրերում։ Նախապատրաստական աշխատանք էր ծավալված Քանաքեռի և Երևանի կայազորների զինվորների մեջ։ Մի շարք վայրերում ապստամբությունն սկսելու հարցը կապված էր Արմենկոմից համաձայնություն ստանալու հետ, մինչդեռ Արմենկոմը, ենթարկվելով հետապնդումների, անցել էր իր ընդհատակ։ Կապի հարցը խիստ դժվարացել էր։ Հայաստանի Ռևկոմը, գտնվելով Ալեքսանդրոպոլում, հնարավորություն չուներ ժամանակին կապ հաս-

տատել տեղերի հետ և ցույց տալ գործնական ղեկավարություն։ Ապստամբությունը միաժամանակ չսկսվելու հետևանքով թշնամին ուշքի եկավ և որոշ տեղերում, ինչպես, օրինակ, Սուրմալուում, Ղարաքիլիսայում, «Ազատամարտ» զրահազնացքում, ձերբակալեց ապստամբության ղեկավարներին և կանխեց ապստամբությունը։

Ապստամբ քաղաքների և շրջանների դեմ պայքարելու համար դաշնակների կառավարությունը չէր կարող հենվել կանոնավոր զորամասերի վրա, քանի որ այնտեղ, ուր ապստամբություն էր բռնկել, նրանք անցել էին ժողովրդի կողմը, իսկ այն վայրերում, ուր ապստամբություն չծագեց, զորքը տրամադրված էր կառավարության դեմ և չէր կարող հուսալի հենարան լինել ապստամբությունը ճնշելու համար։ Այսպիսով երկրի ներսում դաշնակների հենարանը հանդիսանում էին մաուզերիստական խմբերն ու կուլակային, վաշխառուական տարրերը։ Դրանցից էլ կազմվում է Սեպուհի պատժիչ ջոկատը։ Սիայն 8-րդ գնդից Սեպուհը ընտրում է 300-ի չափ հետևակ, իսկ Քանաբեռից՝ մի քանի տասնյակ հրետանավորների միացնում է իր ջոկատին, սակայն դեռևս մինչև Ալագյազ կայարանը հասնելը 160 զինվոր դասալքում են։ Առաջին իսկ ընդհարման ժամանակ հրետանավորները հրաժարվում են կրակել զրահազնացքի վրա։

Կառավարական պատժիչ ջոկատին հաջողվեց մոտենալ Ալեքսանդրոպոլին ոչ թե շնորհիվ այն բանի, որ նա ուներ մեծաքանակ, լավ կազմակերպված, բուրժուազիայի բարձր անձնակազմ, այլ շնորհիվ այն հանգամանքի, որ ապստամբ ուժերը հարձակման չանցան և սահմանափակվեցին փոքր մասշտաբի ընդհարումներով՝ Ջաջուռի շրջանում և Ալագյազ—Աղին կայարանների միջև։ Սեպուհի ջոկատի առանձին խմբերի դեմ մի քանի մարտական գործողություններ կատարեցին Քավթառլուի շրջանի ապստամբ գյուղացիները, որոնք տեղի տվեցին միայն այն բանից հետո, երբ Սեպուհը մայիսի 14-ի առավոտյան մտավ Ալեքսանդրոպոլ։ Ալեքսանդրոպոլի ապստամբների պարտությունը կանխորոշեց ապստամբության ելքը ինչպես Քավթառլուում, այնպես էլ Սարիղամիշում և Կարսում։

Մայիսի 13-ին—լույս 14-ին Կարսից նահանջող ապստամբների մի խումբ կռվի բռնվեց մաուզերիստական առանձին խմբերի հետ։ Թեժ մարտ տեղի ունեցավ Արդինեի ձորում, որտեղ ապստամբների 27 հոգուց բաղկացած ջոկատը մի քանի ժամ հերոսական կռիվ մղեց մաուզերիստական մեծաթիվ խմբի դեմ, գդալի կորուստ պատճառելով նրան։ Այդ պայքարում հերոսի մահով ընկան Կարսի ռևկոմի նախագահ Ղ. Ղուկասյանը, Ս. Ծառուկյանը և նրանց յոթ այլ մարտական ընկերներ։

Սարիղամիշի ապստամբները քաղաքը հանձնեցին միայն մայիսի 18-ին։ Նոր Բայազետի ապստամբների և կառավարական ուժերի միջև մայիսի 19-ին տեղի ունեցած մարտական գործողությունները տևեցին մի քանի ժամ։

Կռիվները երկարատև և կատաղի բնույթ ստացան Դիլիջանի գավառում։ Մայիսի 25-ին, Ղազախ տանող ճանապարհի վրա, Ծուռ կամուրջի մոտ ապստամբների մի խումբ կռվի բռնվեց Դիլիջանից և Քարվանսարայից նահանջող ապստամբներին հետապնդող խմբապետ Մուրադի հեծյալ հարյուրակի հետ և գլխովին ջախջախեց այն։ Այդ ճակատամարտում սպանվեց և խմբապետը։ Դրանից հետո Դիլիջանի ապստամբների դեմ շարժվեց Սեպուհի մաուզերիստական բանդան, որի դեմ մայիսի 26-ից մինչ 28-ը ապստամբ-

ները հերոսական գործողություններ ծավալեցին։ Այդ կռիվների ականատես, 11-րդ Կարմիր Բանակի ներկայացուցիչ Նեչաևը, որն այցի էր եկել ապստամբ գյուղերը, հիացմունքով է խոսում Սովետական իշխանության համար պայքարող գյուղացիների ցուցաբերած հերոսական սխրագործությունների մասին[1]։

Շամշադինի շրջանի ապստամբ գյուղացիները համառ պայքար էին մղում թշնամու դեմ մինչև հունիսի 28-ը ներառյալ։ Նրանք ջախջախեցին և շրջանից դուրս շպրտեցին գեներալ Բեկ-Մամիկոնյանի զորախումբը։ Հունիսի 22-ի գիշերը Քարվանսարայի ապստամբները նոր հարձակում ձեռնարկեցին Ղազախից և 23-ին նորից գրավեցին Քարվանսարան, սակայն հրամանատարության անշնորհք և ոչ հմուտ ղեկավարության հետևանքով հունիսի 24-ին նորից նահանջեցին Ղազախ։ Սեպուհը և գեներալ Խանդալամովը իրենց օպերատիվ հաղորդումներում մայիսի 30-ին և 31-ին խոստովանում էին, որ Շամշադինի ապստամբ գյուղերը իշխանություն չեն ճանաչում և շարունակում են կռվել կառավարության ուժերի դեմ։

Ղազախ-Շամշադինից Ադրբեջան նահանջած ավելի քան 1500 ապստամբներ, Սովետական իշխանությանը մինչև վերջ նվիրված գյուղացիներ, մտան Կարմիր Բանակի շարքերը և 1920 թ. նոյեմբերի 29-ին ոտք դրեցին Հայաստանի տերիտորիան։

Զանգեզուրում Մայիսյան ապստամբությունը լայն ծավալ չստացավ։ Հետագայում այնտեղ Կարմիր Բանակի օգնությամբ հաստատվեց Սովետական իշխանություն։ 1920 թ. հուլիսի 5-ին Կարմիր Բանակի զորամասերը մտան Գորիս։ Զանգեզուրի աշխատավորները գրկաբաց դիմավորեցին իրենց ազատարարներին։ Այդ մասին խոստովանում էր նույնիսկ դաշնակների կառավարությունը, որի արտաքին գործոց մինիստրը Վրաստանի իր դիվանագիտական ներկայացուցչին ուղարկած հեռագրում գրում էր, թե Զանգեզուրի բնակչությունը Կարմիր Բանակին չդիմադրեց, իսկ Դրոն և Նժդեհը ստիպված թողեցին Զանգեզուրը։

Սակայն թշնամին առանց արյուն թափելու չէր ցանկանում իշխանությունը զիջել աշխատավորներին։ Իրենց նպատակին հասնելու համար դաշնակ խմբապետները Զանգեզուրում հրահրեցին քաղաքացիական կռիվներ, որոնք ծանր հետևանքներ ունեցան գավառի համար։ Իշխանությունը երկու անգամ ձեռքից ձեռք անցավ, ամեն անգամ պատճառելով թե՛ մարդկային, թե՛ նյութական մեծ կորուստներ։ Զանգեզուրը ազատագրվեց միայն 1921 թվականի հուլիսին։

* * *

Մայիսյան ապստամբությունը Հայաստանի աշխատավորների զինված պայքարն էր երկրում սովետական պետականություն հաստատելու համար։ Ապստամբության քաղաքական գաղափարական ղեկավարը, ոգեշնչողն ու կազմակերպիչը Հայաստանի կոմունիստական կազմակերպություններն էին։ Ապստամբության մեջ հեգեմոն դերը պատկանում էր բանվոր դասակարգին։ Բանվոր դասակարգի քաղաքական-ռազմական դաշնակիցը աշխատավոր գյուղացիությունն էր։

[1] Տե՛ս „Великая Октябрьская революция и победа Советской власти в Армении", էջ 352։

Հայաստանում տեղի ունեցած այդ համաժողովրդական ապստամբությունը երկրի ներքին, ինչպես և արտաքին դրության հետևանքն էր, և նրա հաղթանակի համար կային թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ անհրաժեշտ գործոնները։ Չնայած այդ բոլորին, ապստամբությունը պարտվեց։ Դրա գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ ապստամբության՝ որպես արվեստի, հիմնական կանոնները հետևողականորեն չկենսագործվեցին։ Հաղթանակ կարող էին բերել միայն ապստամբության մասին մարքս-լենինյան ուսմունքի վճռական կենսագործումը, ապստամբության օպերատիվ ղեկավարումը, համարձակ և վճռական գործողությունների ծավալումը։

Հակառևոլյուցիան ժամանակավոր հաղթություն տարավ, և Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմության մեջ բացվեց սպիտակ տեռորի արյունոտ էջը։

Մայիսյան ապստամբության պարտությունը մեծ դաս հանդիսացավ Սովետական իշխանության հաղթանակի համար աշխատավորների մղած պայքարում։ Ինչպես իրավացիորեն նշել է Ա. Ֆ. Մյասնիկյանը, այն հանդիսացավ Սովետական իշխանության սկիզբը Հայաստանում[1]*։*

Հայաստանի աշխատավորությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի աջակցությամբ, 1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատեց սովետական կարգեր, երկիրը դուրս բերեց աղքատությունից, գաղութակալության լծից և հերոսական աշխատանքով սոցիալիստական հասարակության ամրակուռ հիմքերը դրեց։ Սովետական կարգերի հաղթանակի շնորհիվ հայ ժողովուրդը մտավ սովետական եղբայրական ռեսպուբլիկաների աղատ միության մեջ։

МАЙСКОЕ ВОССТАНИЕ В АРМЕНИИ

К. К. ИОАННИСЯН

(Резюме)

Майское восстание в Армении в 1920 г. — одна из блестящих страниц героической освободительной борьбы армянского народа. Руководимое Коммунистической партией, оно преследовало цель ликвидировать антинародное правление дашнаков и установить Советскую власть. Будучи результатом исторически назревшей революционной ситуации в стране, Майское восстание явилось ответом на политическую анархию, экономическую разруху, голод и эпидемии, охватившие Армению в период господства дашнаков и их иностранных покровителей.

Трудовой народ Армении взялся за оружие, вдохновленный победой Советской власти в соседнем Азербайджане. Прелюдием к восстанию послужили первомайские демонстрации трудящихся, прошедшие под лозунгом свержения дашнакского правительства и провозглашения республики Советов. В первые две недели мая восстание охватило многие города и районы Армении. Революционным штабом восставших стал броненосец

[1] «Կոմունիստ», 1921, № 32։

«Вардан зоравар», стоявший в г. Александрополе (ныне Ленинакан). Однако отдельные очаги восстания были оторваны от единого руководства. К тому же руководители восстания, еще не овладевшие ленинским учением о восстании, как об искусстве, допустили ряд серьезных ошибок. Отсутствие связи с центральным руководством, нерешительность руководителей восстания, не перешедших к широким наступательным действиям, отсутствие помощи извне — все это послужило причиной поражения восстания, потопленного в крови революционных рабочих, крестьян и солдат.

Героическое Майское восстание подготовило победу Советской власти в Армении в ноябре 1920 года.